# 222 Պատահում է՝ հոգիդ խիստ տխրում է

1. Պատահում է՝ հոգիդ խիստ տխրում է
Չար աշխարհի ունայն գործերից,
Միայն Տերն է, որ միշտ քեզ սիրում է,
Օգնություն կստանաս Յիսուսից:

Քրիստոսի՛ն դու շտապիր, մի՛ ուշացիր,
Ծանրությունը սրտիդ դու պատմի՛ր,
Ծնկաչոք աղաչի՛ր, թե դժվար է,
Միայն Նա է բուժում և վերքերդ կապում, դու հիշի՛ր:

2. Գուցե դու մերժված ես մնացել
Բարեկամի, ընկերոջ կողմից,
Յիսո՛ւսը միայն քեզ չի մոռացել,
Հայացքդ չհեռացնես Յիսուսից:

3. Քրիստոսի՛ն դու շտապիր, մի՛ ուշացիր,
Երջանիկ և ուրախ միշտ եղի՛ր,
Հեշտացնում է տառապանքն ու ցավը,
Խաղաղություն տվողին նայի՛ր: